


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՄԻԶՈՒԿՆԵՐՈՎ ՀԻՇՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ

50-ական թվականների սկզբներին առաջին թվանշանային էլեկտրոնային հաշվողական մեքենաների (ԹէՀՄ) հանդես գալու հետ մեկտեղ արագագործ հիշող սարքերի նախագծման փորձեր արվեցին: Այդ առաջին հիշող սարքերը, որոնցում օգտագործվում էին երկաթաթթվային աղի (ԱլեՕ. ԲէԶ Օ₃) մագնիսական հատկությունները, հայտնի են մագնիսական միջուկներով հիշող սարքեր անվամբ: Սրանք ունեն մի բնորոշ հատկություն, որը թույլ է տալիս բազմաթիվ միջուկներ ունեցող մատրիցայում ընտրել տրված միջուկը, այնտեղ գրանցել (ներմուծել) ինֆորմացիայի միավոր (երկհիմնային նիշ) կամ որոշել, թե նախապես ինչպիսի երկհիմնային նիշ էր այնտեղ ներմուծված (գրանցված): Երկհիմնային նիշի ներմուծումը և նրա որոշումը համապատասխանաբար կոչվում է «գրանցել» և «ընթերցել»: Երկու գեպքում էլ օգտագործվող ընտրման սկզբունքը կոչվում է «ըստ հոսանքների համընկնման» և հիմնված է հիստերեզիսային օղակի ուղղանկյունային բնույթի վրա: Ընդ որում, հայտնի է, որ ՀՀ մեծության մագնիսաշարժ ուժը (մշու) բավարար է միջուկը և վիճակի բերելու համար, այնինչ դրա կեսին հավասար ՀՀ/2 մշու-ն բավարար չէ: Հետեւաբար, միջուկները դասավորելով երկշափանի մատրիցայի տեսքով, կարելի է ընտրել ցանկացած միջուկը, համապատասխան ուղղաձիգ և հորիզոնական հաղորդալարերին մատուցելով հոսանք: Յուրաքանչյուր հաղորդալարում հոսանքի մեծությունը պետք է բավարար լինի ՀՀ/2 մեծության մշու ստեղծելու համար այն միջուկում, որով անցնում է այդ հաղորդալարը:

Հոսանքների ուղղության և մեծության այդ պարզանների գեպրում այն միշտկը, որը դանվում է երկու հաղորդալարերի հատման կետում, «ընտրվածն է», քանի որ հոսանքները «գումարվում են» և ստեղծում ԽԸ մեծության մջու Մլուս միջուկ-



444 J.

Ները, սրոնց հատող լարերից միայն մեկն է հոսանքակիր, երբեմն կոչվում են «կիսաընտրված», բանի որ նրանց վրա գործում է ընտրված միջուկին հաղորդած մշու-ի կեսը: Մնացած միջուկները կոչվում են «չընտրված»:

Հիշող սարքերի կառուցման նկարագրված եղանակը որոշ մասնագետների կարծիքով՝ առաջարկել է Զ. ՈՒ. Ֆորեստերը 1951 թ. (Կիսահոսանքների համընկնման սկզբունքով գործող առաջին մեծածավալ հիշող սարքը նախագծվել է Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտում և հարմարեցվել է «Մըր-րիկ-1»-ին, 1953 թ. Զ. ՈՒ. Ֆորեստերի անմիջական ղեկավարու-

¹ М. В. Уилкс, Автоматические цифровые вычислительные машины, Л., 1960, стр. 215.

թյամբ, նկ. 1): Հեղինակությունն ընդունելու համար հիմք հանդիսացավ 1951 թ. հունվարին Զ. ՈՒ. Ֆորեստերի հրատարակած հոդվածը², ուր նա շարադրել է կիսահոսանքների համընկնումով հիշող սարքերի իրականացման հիմնական սկզբունքները:

Սակայն մեր ուսումնասիրությունները պարզել են, որ մինչ այդ աշխատության լույս տեսնելը, 1950 թ. օգոստոսին Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտի Լինկոլնի լաբորատորիայի գիտահետազոտական խմբի անդամ, բակալավր Ռիչլյամ Պապյանը նույն ինստիտուտի էլեկտրատեխնիկայի ամբիոնում պաշտպանության է ներկայացրել «Կիսահղորդիչների համընկնման սկզբունքով գործող հիշողության մագնիսական մատրիցա» դիսերտացիոն աշխատանքը՝ գիտությունների մագիստրոսի աստիճան ստանալու համար³: Այդ էլ մենք ընդունում ենք նման սարքերի ստեղծման սկիզբը:

Մեր երկրում մագնիսական միջուկներով ֆերիտային հիշող սարքեր հայրենական թէշՄ-ների համար սկսել են պատրաստել 1955—56 թթ.: Հետագա 3—4 տարում դրանց որակը զգալիորեն բարելավվեց, և արդեն հնարավոր դարձավ սերիապես կառուցվող հայրենական մեքենաները սարքավորել այդ տիպի օպերատիվ հիշող սարքերով (ՕՀՍ):

Սակայն այդ շրջանում դեռևս չկար ՕՀՍ-երի մասնագիտացված նախագծում և արդյունաբերական կենտրոնացված թողարկում: Բացի այդ, յուրաքանչյուր ՕՀՍ, որպես օրենք, նախատեսվում էր կոնկրետ մեքենայի համար և այլ տիպի թէշՄ-ում այն հնարավոր չէր օգտագործել:

Բավական է ասել, որ երկրում լայն կիրառում ստացած երկրորդ սերնդի մեքենաների («Թէ՛ՄՄ—3», «Ուրալ—11», «Մինսկ—22» և այլն) կազմում տեղ գտած ՕՀՍ-երը կարելի էր փոխարինել միասնականացված հիշող սարքերի ընդամենը մի քանի տարրերակներով, մի բան, որը կտնտեսեր մեծ միջոցներ, զգալիորեն կրարձրացներ ՕՀՍ-երի արդյունավետությունը և այլն:

Այս բոլորի կապակցությամբ 60-ական թվականների սկզբին հասունացել և լուծում էին պահանջում հետեւյալ հիմնական հարցերը.

² J. W. Forester, Digital Information Storage in three Dimensions Using Magnetic Cores, „Journal Appl. Physics“, v. 22, Jan., 1951, p. 44—48.

³ W. N. Papian, A coincident current magnetic unite Thesis of S. M. Electrical Engineering Dept. M. I. T., 1950, August, 31.

—միասնականացված ֆերիտային մատրիցաների կոնս-
տրուկյունների գիտականորեն հիմնավորված նախագծումը և
ներդրումը,

—մեծածավալ և արագագործ 02Ս-երի և նրանց մասերի
(հոսանքի ղեկավարող շղթայի, հաշվարկներ կատարող սխեմա-
ների, շերմաստիճանի մեծ տատանումների պայմաններում նրանց
կայուն աշխատանքն ապահովող սխեմաների և այլն) արդյունա-
վետ տարրերակների նախագծումը:

1956—60 թթ. ժամանակաշրջանում երևանի մաթեմատիկա-
կան մերենաների գիտահետազոտական ինստիտուտում (ԵրևՄԳՀԵ)
Լ. Ա. Գրիգորյանի և Գ. Ա. Զաքարյանի ղեկավարությամբ մշակվել
են ֆերիտային միջուկներով 1024, 4096 բիտ ծավալով, 6—8
միկրովայրկան արագագործության 02Ս-եր, որոնք ներդրվեցին
«Արագած»՝ «Մ—3» թէշմ-ներում։ Ավելի ուշ, 1962 թ. նույն
կոլեկտիվի ջանքերով սահեղձվեց մի նոր սարք՝ 02Ս—16-ը, հազար
նիշի համար, որը ներդրվեց «Հրազդան—3»-ում, իսկ 1965 թ.
02Ս—16-ն արդին երաշխավորվեց սերիական արտադրության՝
միության մեջ կառուցվող նույնատիպ մերենաների համար
(տե՛ս նկ. 2):

Այդ աշխատանքների կատարման ընթացքում գիտականորեն
հիմնավորվել և լուծվել են հետեւյալ հարցերը.

—ունիվերսալ 02Ս-երի կառուցման սկզբունքի մեթոդիկայի
ընտրումը ըստ միջուկների բնութագրերի,

—միջուկների բնութագրերին ներկայացվող պահանջների
ձևակերպումը, ինչպես նաև նրանց ընտրման մեթոդը,


—մեծածավալ կարգային մատրիցայի ընթերցող փաթուլիթի
մուտքում ոչ կումպենսացվող խանգարումները ընդունելի շափերի
հասցնելու խնդիրը և այլն։

Ուսումնասիրենք հիշյալ նորամուծություններից ամենաէա-
կանները։

Հայտնի է, որ 1957—60 թվականներին կառուցվող հայրենա-
կան 02Ս-երը նախագծվում էին 2D համակարգով (այսինքն,
որոնվող թվի ուղղակի ընտրման համակարգով, ի տարրերու-
թյուն 2 1/2D և 3D-ի, ուր որոնվող թվի ընտրումը տեղի է ունե-
նում հոսանքների համընկնան սկզբունքով):

Դա հետեւանք էր ֆերիտային միջուկների անբավարար բնութա-
գրերի, ինչպես նաև նախագծվող սարքերի համեմատաբար փոքր
ծավալի։ Միասնականացված 02Ս-երի կառուցման սկզբունքը ընտ-

բելու համար մաթեմատիկական մեքենաների ինստիտուտում կատարվել էր 2D և 3D համակարգերի համեմատական վերլուծություն: Արդյունքն եղավ այն, որ ընտրվեց 3D համակարգը, որպես ամենաշահավետ մեծածավալ 02U-ի համար:




Նկ. 2.

Նույն ինստիտուտում մեծ ծավալի 02U-երի կայուն աշխատանքի շրջաններն ընդլայնելու և խափանումների չափերը նվազեցնելու նպատակով առաջարկվել է մասնատել կարգային մատրիցայի ընթերցվող փաթույթը, բաժանելով այն մի քանի սեկցիաների, ընդ որում սեկցիաների ելքերը զանազան սխեմային տարրերակներով միացվում են վերարտադրման ուժեղացուցիչն մուտքում: Այսպիսով ընթերցման ենթակա շղթաների բարդացման

և սարքերի ավելացման ճանապարհով ձեռք է բերվել մատրիցաների անհրաժեշտ աշխատունակություն:

Հայտնի է, թե որքան մեծ տեխնիկական և արդյունաբերական նշանակություն ունի կառուցվելիք ՕՀՍ-ի մատրիցայի շրջանակի կոնստրուկցիան: Մաթեմատիկական մեթենաների ինստիտուտի աշխատակիցներ Գ. Ա. Զաքարյանը, Է. Ս. Դադաշյանը, Թ. Թ. Թորգոմյանը, Հ. Մ. Մարգարյանը առաջարկել են ու ներդրել նոր կոնստրուկցիայի շրջանակ գրուտարարական մակարդակով:⁴ Սա աշքի է ընկնում միացումների ավելի խիտ «բազ»-ով, փոքր չափերով, բարձր տեխնոլոգիայով:




Նկ. 3.

Այդ կոնստրուկցիայի կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ էլեկտրական միացում կատարող թերթիկներն ունեն երկշարք դասավորություն և տեղադրված են իրար փակցը-ված համապատասխան երկու կիսաշրջանակների մեջ (նկ. 3): Կոնստրուկցիայի ծավալի փոքրացման շնորհիվ զգալիորեն բարելավվեցին մատրիցաների ու կուտակիչների էլեկտրական պարամետրերը: Մ-2, Մ-3 շրջանակները լայն տարածում գտան և ներդրվեցին սերիական արտադրության մեջ մեր երկորի մի շաբթ գործարաններում (նկ. 4 և 5):

Մեծածավալ ՕՀՍ-ի նախադման ժամանակ լուծման անհրաժեշտ խնդիրներից մեկն էլ այն էր, որպեսզի ապահովվի ուժեղա-

⁴ Г. А. Захарян и др., Рамка для сборки накопителей ОЗУ, Авторское свидетельство № 216891, 1968.

ցուցիչի մուտքի կարգային մատրիցայի ընթերցվող փաթուլթի սեկցիայի կոմուտացիան։ Առժամանակ դա տարրեր կերպ էր արվում։ Այդ սարքերում առանձին սեկցիաներից ստացվող ազդանշանները գծայնորեն ուժեղացվում էին, ուղղվում և ուժեղա-




Նկ. 4.

ցուցիչի մուտքին տրվում կուտակիչ էլեմենտի միջոցով։ Նման սխեման լուծում էր խնդիրը, բայց նրա արդյունավետությունը բարձր չէր, որովհետև անհրաժեշտ էր մեծացնել սարքերի թիվը և այլն։ Հիշված գիտական կենտրոնի աշխատակիցների առաջարկած կոմուտատորը զերծ էր նշված թերություններից⁵։

Այդ կոմուտատորը կազմված է մի քանի զեկավարող դիոդա-տրանսֆորմատորային «ԵՎ» փականներից, որոնց ազդանշանային մուտքերը միանում են ընթերցվելիք փաթուլթի սեկցիաների հետ, իսկ ելքերը՝ «ԿԱՄ» ընդհանուր տրանսֆորմատորային էլեմենտի հետ։ Նշված «ԿԱՄ» էլեմենտի ելքն իր հերթին միացվում է վերարտադրման ուժեղացուցիչի հետ։ Գրանցման տակտում

փականների դիոդները փակվում են տեղաշարժման լարվածությամբ, և մատրիցայի ելքից եկող աղղանշանները արգելափակվում են:

Ընթերցման տակտում փականներից մեկի դիոդներին հաղորդվում է «թույլատրող» լարվածության իմպուլս, որը ժամանակա-



Նկ. 5.

կով մոտավորապես համընկնում է կարդալու հոսանքի իմպուլսի հետ: Փականի ընտրումը տեղի է ունենում հատուկ վերժանիչի միջոցով, որն իր հերթին կազմված է 02U-ի հասցեների ռեզիստրով:

Քանի որ «թույլատրող» իմպուլսը տրվում է ըստ «ԵՎ» և «ԿԱՄ» տրանսֆորմատորների միջին կետերի, այդ իմպուլսներով

առաջացրած հոսանքները փոխադարձաբար կոմպենսացվում են, և ուժեղացուցիչի մուտքին մոտենում է միայն ազգանշանը, որն անցել է ընթերցվող փաթույթի ընտրված սեկցիայի ելքով:

Առաջարկված սխեման ունի շատ կարևոր մի առավելություն. ուժեղացուցիչն աղմուկապաշտպան է: Դա թույլ է տալիս կոմուտատորի բջիջները տեղափորել անմիջապես կուտակիչի մեջ, որի շնորհիվ զգալիորեն կրճատվում են կուտակիչի լարային կապերը 02U-ի էլեկտրոնային մասերի հետ, և այդպիսով նվազում է արտաքին խանգարումների չափը ընթերցվող շղթաների վրա:

Այս մեթոդի ու սարքի հեղինակները՝ ինժեներներ Գ. Ա. Զաքարյանը, Զ. Լ. Հայրապետյանը, Մ. Պ. Աբելյանը, առաջարկել են նաև կոմուտատորի ընթերցվող փաթույթի սեկցիաների պարամետրերը որոշելու իրենց մեթոդիկան, որը նույնպես նորամուծություն է այդ ասպարեզում⁶:

Տրված ջերմաստիճանների դիապազոններում 02U-երի նորմալ աշխատանքի համար, ինչպես հայտնի է, անհրաժեշտ է, որպեսզի գրգոր հոսանքների իմպուլսները համապատասխանեն միջուկների կուցցետիվ լ. հոսանքի մեծությանը:

Ընտրված տիպի միջուկների լ. հ. զգալիորեն պայմանավորված է ջերմությամբ, որը կազմում է 0,5—0,6 տոկոս 1°C -ից: Այդ պատճառով բոլոր միասնականացված 02U-երի համար անհրաժեշտ էր կամ թերմոստատման ենթարկել կուտակիչը կամ էլ գրգոր հոսանքները ինքնակարգավորել ջերմակոմպենսացիայի օրենքով: Թերմոստատումը մերժվեց, քանի որ նման սարքերի սնման համար մեծ հոսանքներ էին հարկավոր, ինչպես նաև այդ սկզբունքով աշխատող սարքերի բարձր արժեքի ու օգտագործման անհարմարության պատճառով:

ԵրՄՄԳՀ-ի կոնստրուկտորներ Գ. Ա. Զաքարյանը և Ֆ. Բ. Շելիանը ուսումնասիրելով ջերմակոմպենսացման բոլոր հայտնի մեթոդները առաջարկեցին նորը, որը հիմնված է չափվող միջուկների լ. հ. վերափոխման վրա⁷:

Նշված մեթոդը իրավունք համար հեղինակները առաջարկել են նաև ուղղանկյուն հիստերեզիսային օղակ ունեցող ֆերիտային միջուկների լ. հ. մեծությունը որոշելու մի մեթոդ, որի

⁶ Г. А. Захарян и др., Метод коммутации сигналов считанных с ферритовых матриц, ВРЭ, серия ЭВТ, вып. 6, 1968.

⁷ Г. А. Захарян и др., Автоматическая регулировка токов возбуждения с ферритового ЗУ..., ВРЭ, серия ЭВТ, вып. 6, 1966.

Էռոթյունը հետեւալն է: Եթև մեծ խմբով՝ միջուկներ վերամագնիսացվեն լրաման իմպուլսային գեներատորով, ապա այդ ընթացքում միջուկների փաթույթներում զանվող հոսանքը կսահմանափակվի նույն միջուկների լու-ի միջին հավասարեցման շափով:

1965 թվականին, մեր երկրում արտադրվող 02Ս-երի առավելագույն ծավալն ու տարողությունը կազմում էր 16 հազար նիշ մեկ րլոկում, 8 միկրովայրկան շրջանցման ցիկլով: Սա միանգամայն անբավարար էր:

02Ս-ի տարողության ու ծավալի մեծացումը ի հաշիվ նույնատիպ րլոկների թվի մեծացման շարդարացրեց իրեն ո՛չ տեխնիկական և ո՛չ էլ տնտեսական տեսակետից, առանձնապես այն դեպքերում, երբ ունակությունը չափվում էր տասնյակ և հարյուր հազարավոր նիշերով: Ուսափ երՄՄԳՀԻ-ում խնդիր էր դրված նախագծել մի րլոկում 65 հազար թիվ ունակությամբ 02Ս:

Նոր սարքը պահանջվող աշխատունակությամբ օժտելու համար ինստիտուտի հիշողական սարքերի բաժնի կոնսուրեկտորները կատարել են մի շարք բարեփոխումներ: Այսպես, կարգային մատրիցան առաջարկվել է հավաքել մողովային մատրիցայից: Այդ նպատակով մշակվել է մողովային մատրիցայի փոքրաչփ շրջանակ, որի վրա ամրացվող թերթիկների միջև եղած տարածությունը հավասար է 1 մմ-ի: Որոշվել է ընթերցվող փաթույթի մի սեկոնդայում ընդորկված կիսագրգոված միջուկների թույլատրելիքանակը⁸:

Ուսումնասիրվել ու լուծվել է կուտակիչի տարածական ձեղվագրման խնդիրը: Կոորդինատային փաթույթների ինդուկտիվությունը նվազեցնելու նպատակով ուսումնասիրվել էր մատրիցաների միացման «երկյակ» մեթոդը: Կոորդինատային հոսանքների արգելման շղթաների իմպուլսների կազմակերպման, ընթերցվող աղդանշանների կոմուտատորների ղեկավարման հոսանքային շղթաների և չափվող միջուկների վերամագնիսացման շղթաների համար մշակված է էլեմենտների միացման կոմպլեքս⁹:

Այդ 02Ս-ի նախագծման ընթացքում ուսումնասիրվել էին ընթերցվող աղդանշանների ստրոբացման և ամպլիտուդային դիսկրիմինացիայի զանազան մեթոդների իրականացման հնա-

⁸ Г. А. Захарян и др., Разрядные цепи воспроизведения информации в ОЗУ на 65 тыс. чисел, ВРЭ, серия ЭВТ, вып. 6, 1967.

⁹ З. Л. Айрапетян и др., Метод коммутации считанных сигналов с ферритовых матриц, ВРЭ, серия ЭВТ, вып. 6, 1968.

բավորությունները։ Դա հնարավոր դարձրեց ստրոբացման և ամպլիտուդային դիսկրիմինացիայի մի քանի մեթոդ խմբավորել ազդանշանների ընտրման շորս հիմնական մեթոդի շուրջը։

Մագնիսական միջուկներով հիշող սարքերի մի այլ տեսակ էն երկարատև հիշող սարքերը (ԵՀՍ)։

Հայտնի է, որ ԵՀՍ-ի օգտագործումը էշՄ-ում, ինչպես նաև այլ թվարկային համակարգերում օգնում է բարելավելու վերջին-ներիս կառուցվածքային կազմակերպվածությունը և հիմնական տեխնիկական բնութագրիրը։

60-ական թվականների կեսերին, իրենց բարձր հուսալիության ու փոքր շափերի շնորհիվ լայն տարածում ունեին տրանսֆորմա-տորային ԵՀՍ-երը։ Մրանց գիշավոր առավելությունն այն էր, որ նրանք օժտված էին ինֆորմացիայի տեղադրման բարձր խոռո-թյամբ և նրանցում հնարավոր էր օգտագործել մագնիսակապով միջուկներ։

Դրա հետ մեկտեղ նրանք ունեին մի ընդհանուր թերություն։ ընտրման ֆունկցիաներն ապահովելու նպատակով ամեն մի հիշող տրանսֆորմատորի ելքին տեղադրվում էր գիոդ, իսկ դադանդաղեցնում էր սարքի աշխատանքը, նվազեցնում զերմունա-կությունը, տեխնոլոգիան և այլ տվյալներ։

Անջատված մագնիսակապով ԵՀՍ-ի կազմում աշխատող մի-ջուկների թերությունն այն էր, որ նրանցից ստացված աղղանշան-ների և միջուկի պատուհանում տեղավորված թվային լարի տեղադրման միջև անմիջական կապ կար, որի բան, որը սահմանափակում էր ԵՀՍ-ի շափային պարամետրերը։

Ուստի տրանսֆորմատորային ԵՀՍ-ի համար անհրաժեշտ էր մշակել լավ բնութագրերով (ինչպես պարփակված, այնպես էլ անջատված մագնիսակապով) միջուկներ։

1961—68թթ. ԵՀՍՄԴՀՀ-ի մի խումբ կոնստրուկտորներ տեխ-նիկական գիտությունների թեկնածու Մ. Գ. Միրիշանյանի ղեկավարությամբ մշակել են տրանսֆորմատորային ԵՀՍ-ի մի շարք մագնիսական էլեմենտներ, որոնք մինչ այդ եղածների համեմատությամբ ունեին բարելավված պարամետրեր։ Նրանք մշակել են մեծածավալ և արագագործ ԵՀՍ-եր, 16.384,25 կարգա-յին թվով օժտված 10 միկրովայրկյան դիմելու ցիկլով ԵՀՍ, որը ներդրվել է սերիական արտադրության «Նախրի-1» և «Նախրի-2» ԹՀՄ-երում, 36.864,50 և 32.768,37 կարգային թվերով օժտված ու 5 միկրովայրկյան դիմելու ցիկլով ԵՀՍ, որը ներդրվել է «Մարշրուտ-1» և «Նախրի-3» ԹՀՄ-երում (1966—1969 թթ.)։

4096,72 կարգային թվով օժտված և 5 միկրովայրկյան դիմելու ցիկլով ԵՀՍ, որում օգտագործվել է ԵրՄՄԳՀԵ-ի աշխատակիցների ստեղծած առանց լծային մասերի Ս-աձեւ մետաղապատ միջուկ-ներով արանսֆորմատորներ¹⁰ (այդ ԵՀՍ-ն ներդրվել է «ԵՍ-1030» ԹՀՄ-ի մեջ 1970 թ.):

Նույն ժամանակամիջոցում (1963—68 թթ.) առաջարկվել են արանսֆորմատորային մագնիսական նոր էլեմենտներ, որոնք համատեղում էին հիշելու և ընթերցելու ֆունկցիաները¹¹ և բարձրացնում ԵՀՍ-երի տեխնիկա-տնտեսական բնութագրերը: Առաջարկված է մի մեթոդ, որը թույլ է տալիս որոշելու լրացուցիչ անցրի կապը համակենարոն և հակակենարոն միջուկային էլեմենտների երկրաշափության հետ¹²: Որոշված է առաջարկված էլեմենտների փաթույթների ինդուկտիվության կախվածությունը նրանց երկրաշափությունից, ԵՀՍ-երի օդային միջանցքով միջուկների ուսումնասիրման անալիտիկ հաշվարկների մեթոդը¹³: Գյուտարարական մակարդակով մշակվել են անշատված մագնիսական կապով արանսֆորմատորի միջուկներ, որոնք ապահովում են ելքի ազդանշանների պարամետրերի կայունացումը¹⁴, և ֆերիտային հիշողության մաս կազմող էլեմենտներ:

С. Г. АРУТИОНЯН

РАЗВИТИЕ ЗАПОМИНАЮЩИХ УСТРОЙСТВ НА МАГНИТНЫХ СЕРДЕЧНИКАХ В АРМЯНСКОЙ ССР

Резюме

С появлением первых ЦВМ в СССР начались разработки ферритовых ЗУ соответствующих объемов хранения информации и быстродействия.

Первые оперативные запоминающие устройства на магнитных сердечниках (ОЗУ) в Армянской ССР проектирова-

¹⁰ М. Г. Мириджанян и др., Долговременное трансформаторное ЗУ. Авторское свидетельство № 192858.

¹¹ М. Г. Мириджанян и др., Расчет индуктивности элементов ДЗУ... ВРЭ, серия ЭВТ, вып. 7, 1970.

¹² М. Г. Мириджанян и др., Ферромагнитное устройство для построения схем совпадения. ВРЭ, серия ЭВТ, вып. 7, 1966.

¹³ М. Г. Мириджанян и др., Общий случай расчета геометрических соотношений... ВРЭ, серия ЭВТ, вып. 6, 1969.

¹⁴ М. Г. Мириджанян и др., Расчет магнитных цепей управления... ВРЭ, серия ЭВТ, вып. 6, 1969.

лись в ЕрНИИММ в конце пятидесятых годов. В начале шестидесятых годов в республике были созданы первые отечественные ОЗУ с объемом 16 тыс. чисел при быстродействии 8 мк. сек. За ним последовали ОЗУ с объемом в 32 и 65 тыс. чисел, разработки которых имели место с использованием ряда усовершенствований, выполненных отчасти на уровне изобретений.

В середине шестидесятых годов в Армянской ССР впервые в Союзе был создан ряд унифицированных ОЗУ, посредством которых стало возможным оснащение отечественных ЦВМ памятью с объемом и быстродействием с определенными величинами разбросов параметров.

В статье рассмотрены также особенности построения первых долговременных запоминающих устройств (ДЗУ) на магнитных сердечниках, созданных также в ЕрНИИММ, выполненных с использованием многих изобретений инженеров и техников из этого научного центра республики.